

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Աւանձին համարները 7 կոպէկով:
Թիֆլիսում գրում են միմիայն խմբագրատան մէջ:
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը ընդունում է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Կայտարարութիւնը ընդունում է ամեն լիզուով:
Կայտարարութիւնների համար վճարում են
խւարճանչեր ըստին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խօսքովի գործը. Նա-
մակ Ալալցիայից. Նամակ Խմբագրին. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ, ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հորտերի աղա-
տութիւնը Բրազիլիայում. Տեղեկութիւններ թիւր-
քաց Հայաստանից. Նամակ Թիւրքիայից. Արտա-
քին լուրեր.—ՍՈՒՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌՆԱՎԻՐՆԵՐ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՕՐՈՅՎԻ ԳՈՐԾԸ

Մայիսի 19-ին սկսվեցաւ Թիֆլիսի նահանգա-
կան դատարանում նախկին քննիչ Ալեքսանդր
Խօսքովի գործը, որը մեղադրվում է իր բնակա-
րանը կրակ տալու, ապահովագրական պրէմիան
20 հազար ընդունելու և այլ անարար գործար-
քներով:

Խօսքով 39 տարեկան է, պակաս է, հայ-
լուսաւորական դաւանութեան է պատկանում,
համարվում էր շատ ունեւոր մարդ, թէև մեղա-
դրական ակտը պնդում է, որ վերջին ժամանակ-
ները, չը նայելով, որ Խօսքով ունի քաղաքացի-
աներ Երևանում, աներ Թիֆլիսում և որպէս կը-
նոջ բաժինը էլ ստացել է 15 հազար ռուբլի,
Խօսքովի ներթափանց գործերը շատ վատ էին,
մասնաւորապէս որ նա պարտ էր 20 հազար ռուբլի
իր քրոջ Աննա Մելիքովային Գրանից մեղադրա-
կան ակտը այն եղբակցութիւնն է դուրս բե-
րում, որ Խօսքով փողի մեծ կարիք ունէր:

Մեղադրական ակտը շատ մեծ և մանրամասն
է: Նա վերջնապէս է հետեւեալ եղբակցութեամբ
Խօսքով մտադրվելով ստանալ ապահովագրական
պրէմիա իր բնակարանում եղած և «Ելալու» ըն-
կերութեան մէջ ապահոված իրեղենների համար,
յուլիսի 23-ին 1887 թ.ին պատրաստեց իր բնա-
կարանում, Միրմանովի տանը, Երևանի քաղաքի
փողոցում, ամեն տեսակ այրվող նիւթեր, ինչպէս
Փօթոգէնով սրկած փայլաներ, փայտի տաշեղ-
ներ և այլն Գրանից առաջացաւ հրեհ, որը
հանդերձ հարեանները, իսկ ինքն բնակարանի
տէքը, այդ պատրաստութիւնները տեսնելուց յե-
տոյ, անհետացաւ, դիչերը իր քրոջ մօտ անցկաց-
րեց և եկաւ տուն միայն առաւօտեան, երբ հըր-
դեհը հանգրցած էր:

Խօսքովի գործում դատարանի կազմակերպու-
թիւնը հետեւեալն է. նախագահում է Վ. Կարնո-
վիչ, անդամներ են Լ. Ժուկովիկի և Գ. Բուսա-
նով, մեղադրում է պրօկուրորի օգնական Ա.
Չայկովիկի:

Խօսքովի ինքն ներկայ է դատարանում և նըս-
տած է մեղադրվածների նստարանի վրա: Նրան
պաշտպանում է երգուեսլ հաւատարմատար Շե-
վախի:

Գործի մէջ մեղադրական իշխանութեան կողմից
կանչված են 103 վկաներ, իսկ պաշտպանութեան
ինքնաբերով կանչված են 97 վկաներ և 22 էկա-
պիւրաներ: Այդ վկաներն ու էկապիւրաները պատ-
կանում են հասարակութեան ամեն տեսակ դա-
ւակարգներին Գատարանի նիստը սկսվեց առա-
ւօտեան 10 ժամին և 20 օրակէս:

Խօսքովի և իր պաշտպանը նիստի սկզբում
յայտնեցին, որ քննիչ Գրանից վրէժնակալութիւն
անկախ, շատ բաներում անկասու և նոյն իսկ ա-
պօրինի էր վարվում, այդ պատճառով մեղադր-
վածը և պաշտպանը խնդրում են գործի ընդունու-
նը դատարանում յետաձգել և գործը նորից վե-
րադարձնել քննիչին՝ նոր հետախուզութիւններով
լրացնելու համար Գատարանը մերժեց այդ խն-
դիրը:

Կանչված վկաներից 10 հոգի չը ներկայացան
առանց օրինակի պատճառների, իսկ 20 հոգի
օրինակի պատճառներով: Պաշտպանը պահան-
ջում էր այդ պատճառով գործը յետաձգել Գա-
տարանը մերժեց այդ խնդիրը:

Մեղադրվածը բողոքեց և մեղադրական ակտի
մի քանի անձրութիւնների դէմ Գատարանը
յայտնեց, որ այդ բողոքը տարածում է և որ այդ
մասին նա կարող է բողոքել գործի ընթացքի և
դատարանական վիճարանութիւնների ժամանակ:
Նիստը ընդմիջվեց կեսօրից ուշ, վկաների և էկա-
պիւրաների երգումից յետոյ և նորից սկսվեցաւ ե-
րեկոյեան 7 ժամին, շարունակվելով մինչև կէս
գիշերը:

Վկաների հարցմունքները սկսված են, և ինչ-
պէս երևում է, երկար կը տևեն:

Երեկոյեան նիստում հարձուփորձ էին անում
Խօսքովի նախկին ծառայ Սարգիսովին: Գլխաւոր
հարցերը վերաբերում էին Խօսքովի տան իրերի
քանակութեան և կօշոր տարեծ իրեղեններին:
Սարգիսով նոր ոչինչ չտեսաւ, բացի մի նկատու-
ղութիւնից, որ բաւական հետաքրքիր է: Կօշոր
գնալիս Սարգիսով թողել էր Թիֆլիս մի կողպած
արկղ, այդ արկղը ուստիլանութիւնը Սարգիսովի
ներկայութեամբ բացել էր և Սարգիսով յայտնել
էր թէ նրա մէջ ոչինչ չէ պակասում: Մի
քանի ժամանակից յետոյ նրան ներկայացնում են
մի արխաւուս, որ գտնված է եղել ընդունարա-
նում Սարգիսով ատում է, որ արխաւուսը ի-
րանն է և գտնվում էր արկղում: Արխաւուսի
զրպանի մէկի մէջ գտնվում է մի ոսկէ խաչ,
Սարգիսովի ասելով այդ խաչը պատկանում
է իր կնոջ, և առանձին կապոցի մէջ ուրիշ
թանկագին իրերի հետ նոյնպէս գտնվում էր նոյն
արկղում: Բոլոր միւս թանկագին իրերը գտել են,
մնացել է միայն խաչը: Եւ այդ իրերի դրամա-
ւում նա մեղադրում է Խօսքովին: Այդպիսով
Սարգիսով նոյնպէս քաղաքացիական պահանջող
է դատարան Սարգիսով շատ բաներում իրան
բաւական հակասում էր: Սարգիսովի վկայութի-
ւնից յետոյ կարողացվեցան գտնադրան արձանա-
գրութիւնների ընկալարանի գրութեան մասին և
պահարանների, սեղանի և որիչ բաների կրակի
պատճառած վնասի մասին:

Միւս օր, ամսի 20-ին, առաւօտեան նիստին,
շարունակվում էր ուրիշ այդ տեսակ արձանա-
գրութիւնների կարգալը: Հարցմունքի ներթափա-
ցան էկապիւրաներ՝ պ.պ. Ստրուլի և Օտտէն այն
մասին թէ պահարանների մէջտեղից է կրակ
սկսվել, երևաց որ կրակը սկսվել է միջից:

ՆԱՄՍԱ ԱՍՒԱՅԻՍԻՅՈՒՆ

Մայիսի 16-ին

Չեքը դրած ծնօտին, մորմուղում է ծնողի
սիրտը, բանի նայում է իր միտուճար հիւանդ ե-
րեխայի մահին. տաք գործը ընդհանրում է
վերամակից, երեսից քրտնալի ջերմ հեղեղը ողո-
ղում է հիւանդի մաշված կուրծքը, չնչաւութիւ-
նը նուազած, աչքերում արեան հոսումը լճացում է
և տեսողութիւնը մարմնած: Ի՞նչ անէ դժբաղդ
ծնողը, ուր և ում դիմէ: Չունի հարուստ բարե-
կամ, տէր և պաշտպան. նրա յոյսը միայն նա-
խախնամութեանն է ապակնած. նա չէ կարող
դիմել բժշկին, չէ կարող գտնել դեղ և դարման,
հաց չունի տանը, փող չունի գրպանում, մուրալ
չէ կարող.—ամաչում է, խորթ է նրան մուրալու
արհեստը. իսկ իր ճակտի հալալ քրտնալի նա
միայն կարողացել էր մի կտոր ցամաք հաց ճա-
րել անկնայ. հիւանդութիւնը հաշտի մէջ չէր մը-
տած. այժմ հեծկտանքով հիւժվում է իր կեան-
քի կէտը, հիւժվում է իւր սիրելի զաւակի կեան-
քը անբողջապէս, զո՞հ գնալով չքաւորութեան
ժամկէտներին:

Նրբ պէտք է ունենանք մենք քաղաքային ըը-
ժիչ և հիւանդանոց:

Մանկը այս դեմաւիօր խրճիթը. ցնցոտիները
հազիւ ծածկում են մերի սրունքները՝ զալկա-
ցած, հիւճար, դժգոյն արարածներին, որոնք կրում
են մեղ նման բնական մարդու պատկերը, անու-
նը և բնակվում այս որջում: Գրե՛ք պատաւ թէ

մանկներ որը մնացած են իրանց պաշտպանող
աշխատաւոր հողացողից, մինը ամուսնից, միւս-
ները հօրից: Չը վրդովնեք այդ «մաքից մուսացած»,
աչքից հեռացած» տառապեալները հանդատու-
թիւնը. դրա ապրում են քնով՝ կերակրվում են
երազնեղում և մեռնելու են անսթափելի նինջով:
Գրան ճոջը բազական սթափեցնում է դաւ-
կացածներին, երազելով տաք ապուր. ամառը,
սխալվում են իրանց ներթափանցան մէջ, կրկին
մանում անպայաների աշխարհը, քաղցը երազնե-
րով մտուղ առնելու, ակամայ զո՞հ լինելով, երբ
օրերով բաղնող չի լինի նրանց դուռը:

Նրբ պէտք է ունենանք մենք աղքատների հո-
գաբարձութիւն:

Այսօր տօն է կամ կիրակի: Ժամերգութիւնը
աւարտված, Աստուծու պարգեւած համեստ ճաշը
վայելած արևում է մեր ջահիլը, երբ ոչինչ չունի
անկուս: Սրճարան դիմել նա խորում է, որովհե-
տև իրանից հասակաւորները լայեղ չեն անում
խօսակցութեան մէջ ընդունելու նրան. լուր և լսել
նրանց մեծ մասամբ դատարկաբանութիւնները
այնքան դուրեկան չեն. դիմեաւուն մտնել և չէ
սիրում և ատում է երկու պատճառներով.—
նա գիտէ որ գինեանից մեկնողը իր խելքի կէտը
գրաւորած է լինում, և երկրորդ այնտեղ մտնողը
գրպանում ունենալու է խելքը դաւաճելու հա-
մապատասխան տասի: Մի ժամ չըջելը քաղաքա-
յին այգիում նրան լիովին չէ բաւականացնում.
Նա ցանկանում է իր ազատ ժամերը դործածել
այնպիսի պարագումունքով, որ օդտակարը միա-
ցած լինէր վայելչութեան հետ:

Նրբ պէտք է ունենանք մենք հասարակական զը-
բաղարան.—ընթացաբան:

Նոր բան չէ, որ կրկնում են. մեր Ալալցիայի
թէ քաղաքային և թէ աղքատի դպրոցները ի-
րանց ներկայ կազմակերպութեամբ չեն կարող
արտադրել կեանքի համար պատրաստված սա-
նիք, որոնք, մինչև անգամ իրանց դասընթացը
աւարտելուց դիմի գտնվում են մի տեսակ տար-
տամ դրութեան մէջ.—արհեստի մտնելու անընդու-
նակ, որովհետև հասակները չը պիտի համապա-
տասխանեն նոր և համակ աշակերտի պաշտօն
վարելու. իսկ գործակատարի թէ գրադրի պա-
հանջներ չը կան. նորից ուսումը շարունակելու
համար նիւթական միջոցներ են պակասում.
ստիպված, մի մասը մտնում է չըջմուկներին
խմբի մէջ, ստուարացնելով ապագայ իրօտաների
թիւը: Անցեալ տարի դուստրում ի նկատի առնվե-
ցաւ և որովհեցաւ քաղաքային դպրոցում Փրան-
սերէն լեզուի դասատուութեան փոխարէն բանալ
արհեստանոց դպրոցին կից, հիւանդութեան և փա-
կանակերպագործութեան բաժանմունքներով:
Այդ մասին իր ժամանակին ուրախալի բացա-
կանչութիւններ եղան: Գումանի որոշումը ու-
ղարկվեցաւ ի հաստատութիւն ուր հարկն է և
ներկայ ուսումնական տարվա սկզբից Փրանսե-
րէն լեզուի ուսուցիչը արձակվեցաւ իր պաշտօ-
նից, իսկ մինչ ցարը արհեստանոցի խնդիրը մը-
նում է զօրի տակ:

Նրբ պէտք է բացվեն մեր ուսումնարաններին
կից և արհեստանոցի բաժանմունքներ:

Ես յիշում եմ, սրանից մի քանի տարի առաջ,
համբարութիւնները որպիսի օգտակար և գեղեցիկ
կազմակերպութիւններ ունէին: Եթէ մինը մի
կամ խարդախութիւն, եթէ մինը մի բանով վի-
րաւորած լինէր մի անձի, եթէ մինը խլած լինէր
միւսից նրա աշակերտին, եթէ մինը հրապարա-
կական խայտաւարութիւն արած լինէր (մինչև
անգամ և ընտանեկան վէճերի մասին) և այլն,
անմիջապէս ենթարկվում էր համբարական դա-
տաւանի: Այստեղ ուստաբալին (արհեստա-
պետ) թէ դատարար էր և թէ դատաւար, իսկ հաւ-
քաբը միջնորդ. դատապարտում էին յանցաւորին
գրամական տուգանքի, կամ եկեղեցու համար
խառնել, մոմ և ձէթ նուիրելու, մի քանի օրերով
դրոցում էին յանցաւորի կրպակը, և բանալին իր

մօտ էր պահում ուստաբալին մինչև իր վճիռը
ամբողջապէս կատարված լինելը: Համբարութիւն-
ները ունէին և իրանց բարեգործութիւնները. նը-
րանք իրանց կարօտեալ, հիւանդ արհեստակցնե-
րի գերդատանի ծախսը հողում էին մինչև վար-
պետի կատարեալ առողջանալը և գործի սկսվե-
լը իրանց համբարական գանձանակադրամով, որ
հաւաքվում էր շարժական որոշեալ վճարներից
և տուգանքներից. մի համար մշտապաւս մի
կանթեղ էր պահում իր ծախսը մի եկեղեցու մի,
միւս համարը մի ջահ էր վառում մի այլ եկե-
ղեցու. ընկերական զուարճութիւններ կատա-
րում թէ նորընծայ վարպետ ընդունելու և թէ
զարնանամտին, մատաղներ բաժնուճ ընդհանուր
աղքատներին և այլն և այլն Ո՞վ կարող է տա-
րակուսել թէ համբարական այսպիսի կազմակեր-
պութիւնները որքան բարոյական և նիւթական
չաներ կարող են տալ թէ իրանց չըջմունքն և թէ
ընդհանրապէս ամբողջ հասարակութեանը: Այժմ
լուծված են համբարութիւնները և մի քանիսն են
մնացած հին սկզբունքով: Նրբ պէտք է վերա-
կազմվեն համբարութիւնները:

Մինչդեռ տարրացած չէ ընդհանուր զարգա-
ցումը մեր մէջ, և մեր ծնողական յարկը ըն-
դունակ չէ մեզ պատրաստելու պարտաճանաչ
մարդիկ, մենք միշտ սպասում ենք ամեն մի
բարի գործի նախապատրաստմանը մեր առաջա-
ւորներից և քաղաքի ներկայացուցիչները: Եկեղե-
ցին մեզ հրապարտում է միայն այն ժամանակ, երբ
ներդաշնակ և քաղցր երգեցողութիւն է լինում,
երբ տաճարի բեմից մեզ կարդում են և հասկաց-
նում կենդանի խօսքերով Մեծ վարդապետի շը-
նորհաց խրատները բարոյական պարտաճանաչու-
թեան մասին, բարոյական, առողջապահական և
տնտեսական տեսակէտից, երբ եկեղեցու ներքին
բարեկարգութիւնը օրինակելի է լինում, երբ տա-
ճարի սրբազնագործ պաշտօնեաները համապա-
տասխան են լինում իրանց կոչման և առաքնու-
թեան կենդանի տիպար են հանդիսանում ժողո-
վրդի աչքում: Ալալցիայի ամենամեծ կարօտու-
թիւն է դրում արժանաւոր յարգելի և քաղաքի-
ստիկուն, գործունեայ յարողը միայն կարող է
հաստատուն պահել բարեկարգութիւնները եկեղե-
ցու մէջ և աւելի ևս դրաւել ժողովրդին իր նուէ-
րական գրկում: Պակասում են մեզ նոյնպէս
թարմ և առաջադէմ հասարակական գործիչներ.
մեր յոյսը այս վերջին կէտում այն ժամանակ
միայն պակասված է լինում, երբ տեղական երի-
տասարդութիւնը—ինտելիգենցիան ձեռք ձեռքի
տուած համախումբ կազմելով մեր քանից աւելի
ուսուցիչների հետ ձեռնարկեն մի օգտակար ծա-
ւայութիւն մատուցանելու հասարակութեանը.—
կազմել գրականական երկիտներ, տալ յաճախա-
պէս մեր կեանքին և հասկացողութեան օգտակա-
կար թատերական ներկայացումներ, կարգալ լեկ-
ցիաներ արհեստի, արուեստի, դիտութեան, ա-
ռողջական և տնտեսական ճիւղերի վերաբերու-
թեամբ: Մինը միւսից խորշելով դատաճանում են
մարդկային արժանապատուութեանը: Խտելիգեն-
ցիայի վրա կայ այդ սրբազան պարտակա-
նութիւնը, մինչև ժողովուրդը պատրաստվէր
ինքնաճանաչութեան զարգաբարձին և միշտ կախ-
ված չը լինէր իր գործերը շաւիղը հարկելու
կոչված աղաներից, կառավարիչներից և զանա-
զան բարեգործական ընկերութիւններից:

Ա. Աս.

ՆԱՄՍԱ ԽՕՐՈՅՎԻՆ

Ալալցիայի 18 մայիսի

«Մշակի» ներկայ թիւի № 13-ում տպված իմ
նամակի դէմ նոյն լրագրի № 20-ում տպվեցաւ
մի անտօրադիր նամակ Ալալցիայից, որպէս
հերքում իմ յիշեալ նամակիս Որպէս ապացոյց
իմ ասածներին ներկայացնում եմ հետեւեալ բա-
ցատրութիւնը. նախ ես իմ նամակիս մէջ ոչ մի
համեմատութիւն չէի արել հին և նոր դէպու-

նակը, որը գործ էր դրվում նոյն իսկ սրանից տասն և տասն հինգ տարի առաջ, և մտցնել այդ առարկայի մէջ մի փոքր քննական հայեացք, ենթադրելով նրան քննադատութեան, և դասաւորելով պատմական երևոյթները ու դէպքերը մի յայտնի և որոշ սխառեմաբան Զուր Են մեղադրում մեր վարժապետները հայոց պատմագիտներին, ասելով որ նրանք միայն չոր ու ցամաք և միակողմանի փաստեր են հաղորդել. այժմ պէտք է օգտւել այդ փաստերին, հայոց պատմութիւնը աւելի զարգացուցիչ, աւելի կրթիչ դարձնելու համար, գէթ այնպիսի դպրոցներում, ինչպէս Նիւրնբերգի դպրոցն է: Նիւրնբերգի դպրոցի վեցերորդ վերջնական դասատան մէջ հայոց պատմութիւնը աւանդել համարեալ այնպէս, ինչպէս աւանդում է ծիսական դպրոցում, կամ ուրիշ դպրոցների չորրորդ դասատանը, — ոչ կարելի է և ոչ պէտք է: Այդ տեսակէտից նայելով գործի վրայ, պէտք է ասել որ հայոց պատմութեան դասատուութիւնը այդ դպրոցի վերջին դասարաններում մեծ փոփոխութեան և առաջադիմութեան է կարօտ:

Մայրաքաղաքի լրագիրներին «Հիւսիսային գործակալութիւնը» Կ. Պոլսից հեռագրում է հետևեալը. «Վանի հայ-կաթողիկոսների եպիսկոպոս Գովհաննէսը սպանված է մայիսի 7/19-ին, ձերբակալված էն սպանութեան գործում կասկածով մի քանի անձինք, ի միջի որոց հայոց դպրոցի մի վարժապետ Բ. Գուռը քննութիւն է նշանակել՝ հրամայելով խիստ պատժել յանցաւորներին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՃՈՐՏԵՐԻ ԱԶՍՈՒԹԻՒՆ ԲՐԱԶԻԼԻԱՅՈՒՄ

Հեռու Ամերիկայի հեռու պետութիւններից մէկում, Բրազիլիայում, այս օրերս կատարվեց մէկ պատմական նշանաւոր և համակրելի իրողութիւն. ճորտերին ազատութիւն հնորհնդ: Այդ նշանաւոր եղելութիւնը, որի լուրը կայծակի արագութեամբ թռաւ դէպի ամեն կողմ, ընդհանուր ուրախութիւն պատճառեց լուսաւոր աշխարհում: Այդ պիտով թէ Բրազիլիայի ազատամիտ կայսր Պեդրոն թէ թագաւորութեան կրօնակցութիւնը հասան աջողութեամբ իրանց վաղուց նախադժած նպատակին... Վաղուց ենք ասում, որովհետև ճորտերի ազատութեան գաղափարը վաղուց արդէն արձարծվում է Բրազիլիայի մէջ, վաղուց արդէն դարձել է ազատամիտ և առաջադէմ կրօնակցութեան գործունէութեան գլխաւոր նպատակներից մէկը: Նոյն իսկ Պեդրո կայսրը իր երիտասարդ հասակից արդէն աշխատել է այդ գաղափարի իրագործման մասին և պէտք է խոստովանել, որ նա մեծ օրնութիւն է ցոյց տուել այդ գործին: Ճորտերի ազատութեան գործը Բրազիլիայում կատարվեց աւելի դանդաղ կերպով, քան թէ օրինակ, Միացեալ-Նահանգներում: Միացեալ-Նահանգներում ճորտերի ազատութեան գործը, ինչպէս յայտնի է, առաջ բերեց անապին իրարանցում, անապին միջում և նոյն իսկ արհեստանոց կառններ. այնպէս որ այդտեղ այդ ազատութիւնը բռնակամ թանգ է նստել նրա պաշտպաններին, իսկ Բրազիլիայում մի կատարվեց ընդհանուր ուրիշ հանգամանքներում. գաղափարը ծնվեց, նա արձարծվեց փոքր առ փոքր, նա մարմնացաւ շատ հանդիսա կերպով, նայած ժամանակակից հանդուսանքներին, և վերջապէս տասնեակ տարիներից յետոյ կարողացաւ աջող հետևանք ունենալ, առանց ներքին պատերազմների և խռովութիւնների առաջ բերելու երկրի մէջ: Դեռ 1850 թւականին, այն է սրանից 38 տարի առաջ, Բրազիլիայում ներքիններին աւանդել և վաճառելը պարտաւնտը մի վերին աստիճանի բնութեանը բան համարեց: Եւ այդ ուղղութեամբ էլ գործեց երկար տարիների ընթացքում պարլամենտը: Նրա գործունէութիւնը այդ ճիւղերի մէջ աջողից և 20 տարի անցնելուց յետոյ, այն է 1871 թւականին հրատարակվեց մի նշանաւոր օրէնք ճորտերի վերաբերմամբ: Այդ օրէնքը յայտնում էր որ իր հրատարակութիւնից յետոյ ծնվածները չը պէտք է ճորտ համարվեն: Այդ, ի հարկէ արդէն մի մեծ քայլ էր: Մի մեծ քայլ էլ եղաւ 1875 թւին, երբ ներքինների մի մասին ընտրողական իրաւունք տրվեցաւ, և այդպիսով տարիների ընթացքում կարելի եղաւ բաւական կարճել ճորտերի թիւը, որոնց թիւը այժմ կէս միլիոնի է հասնում, մինչ-

դեռ առաջ նրանց թիւը միլիոններից էր անցնում: Այժման ճորտերը կազմում են իսկապէս հին սերունդը, մեծ մասամբ հասակ առած և ծեր մարդիկ: Ահա նոր օրէնքով դրանց էլ արվեցաւ ազատութիւն. այժմ Բրազիլիայում այլ ևս չը կայ ճորտութիւն, ճորտութեան վերջին նշանները անհետացան, և Բրազիլիան անկասկած կարող է 1888 թւականը իր զարգացման պատմութեան մէջ ամենափառաւոր տարիներից մէկը համարել:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԿՍ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Կ. Պոլսից ստացած մեր տեղեկութիւնների մէջ, որոնք վերաբերում են Մուշի դէպքին և Ազարեան Պատրիարքի բռնած դիրքին, դատում ենք հետևեալ նկատողութիւնը: «Մուշի դէպքին համար մինչ Ազարեան պատրիարք մեծ ջանքեր կընէ չորս կողմն ընկած, Թարսիսի Պատրիարք բոլորովին անտարբեր է նստած, մերժողական պատասխան կուտայ անոնց, որք կը խնդրեն իր մէջ աշխատել գէթ ի նպատակ Միացեալ-Ղնկերութեանց»:

Մեզ հասած տեղեկութիւններին նայելով Հայաստանի դանազան կողմերում հեղինակը անապին քննարկում են տուել Բերում ենք այդ մասին մի քանի մանրամասնութիւններ: Երկրորդ կողմերում պատահած ողորումների մասին «Արևելքին» հետևեալն են գրում: «Արևածմ սկսաւ ապրիլ ամսոյ հետ, որ Երզնկայի համար մեռնելով ամին կողակու արժանի է: Առատ անձրևներ կուկիսին տեղալ շարունակ 10—12 օր, և անա Երբայտ դեղը կը յորդի, որում կը հետևին Գայլ դեղ, Չարտազի, Վասկերտ, Մերձսն Բաղիք առնուն և այլ գետակներ: Կողմերի դեղ և քաղաք, կը փլին ու կը քայքային շատ մը տուններ, այդիններ, արտեր, ջրաղացներ, կրպակներ, կամուրջներ, ճամբաներ և այլն: Ողորումը Գեմախի և Ակնայ մէջ ալ մեծամեծ աւերումներ կը գործէ: Ողորումն իւր ակերիչ ընթացքին մէջ Երզնկայի հիւսիսակողմը գտնուած Աղթաչ անուն 50 տուն քրդաբնակ գիւղին վրայ լեռ մը փրցունելով, երեսուն տունը գետին խոր անդունդ մէջ կը թաղէ հանդերձ 142 բնակչոք, անասնոք և ամենայն շէնքերով: հետք, նոյնչէս անգլիսի և չերիկի թէ 69 մնացան այն խեղճեր և ինչպէս աւանդելին իրենց հողին Թշուառութիւնը մեծ է այսօր Երզնկայի և շրջակայ ընակչոք մէջ, շատ մը աղքատներ իրենց օրապահիկն եղած մէկ այլին կամ արտը կամ տունը կորսնցնելով, ձեռքեր ի ծոցի կողքան յուսահատ»:

Իսկ Սեբաստիայի կողմերի հեղինակների մասին հաղորդում են հետևեալը: Ապրիլի սկիզբները տեղացող յորը անձրևներ հնձոց առատութիւն կը խոստանային ու ժողովուրդն ալ անցնալ տարեկան չորութիւնէն և հետևանքն եղող սղութիւնէն անբերեալ ուրախ զուարթ երկը կը պատրաստուէր խնդալից ջրատիկ մը անցունել, պատուհասը չուչացաւ խթման շաբաթ օրն ապրիլի 23 ժամն 8-ին սկսաւ յորդառատ անձրև մը տեղալ, նմանը ցարդ հողի տեսնուած: Քաղաքին եղբքը քրոջ Ալիս գետն անմիջապէս անհամեմատ կերպով քարձրացաւ: Մնաւել գետակի եղիքը դանուած տուններ գրեթէ բոլորովին հին և ցած ըլլալով ջուրերն անարգել տուններ լեցունցան, մինչ տան տիկնայք խթման սովորական ուտելիքներն ելիելու դրադեալ էին: Աղիկուտը և սրտաձիկի էր տեսարանը. կանայք հերարձակ ջուրերու մէջ, տղայք ճէլով օդը կը թնդայնէին. վտանգն անաւոր էր արդարև. ջուրն հետզհետէ կը տեղար: Այս արկածի լուրը կայծակի նման տարածուեցաւ քաղաքին մէջ. ամեն կողմէն գունդ գունդ կը դիմէին: Կրօնական և հեծեալ զօրաց հրամանատարը փութալով հարկ եղած հրամանները տալ անձամբ ալ ներկայ ըլլալով փութացած էին. ձիաւոր զօրքերն և ոստիկաններն իւրեանց ձիերուն վրայ հեծած հարիւրաւորներ ջուրերու գոհ և փրտակայ ասկ մնալու վտանգէն ազատեցին: Առնուած վերջին տեղեկութեանց նայելով, Մեմլէ և Ալիս գետերու մօտ 120—150 տուններ կործանած և 50—70 տուններ անբերելի դարձած են. 30—40 խանութներ ալ գերծ մնացած չին պատահաւոր: Վնասը կը հաշուի 10—15 հազար ոսկին, թող Ալիսի երկայնիկ ջուրի հարկէ 2-օմ թէ՛ Ազարեան հակառակ կը շարժի կրթիկի եկեղեցւոյ ուղղութեան, զօհողութիւններ ընելով Հակահատուցանց, իսկ Ազարեան կը պնդէր թէ ուրիշ միջոց չը կայ միութիւնն ընելու և աղբեղութիւն բանեցնելու արեւելից մէջ, որպէս զի նորանոր գունդեր հայոցմէ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Կ. Պոլսի, 10 մայիսի
Երէկ, երկուշաբթի առաւօտ, երբ Ղապաթիա եկանք, շատ անախորժ տպաւորութիւն մը ունեցանք, կարչալով «Քարաբը» լրագրի մէջ հետևեալ տեղեկութիւններ: «Մուշին բարձրագոյն պաշտօնատանց ուղղակի հեռաղիքը կը ծանուցանեն թէ անցեալ զիշեր մէկ քանի հողիներ Վանայ և Բաղէի հայ-հոմէականաց առաջնորդ Գովհաննէս զերպայծառի (որ Մուշ կը բնակի) տունը կը մտնեն, և դերպայծառը տաներկու տեղէն վերաւորել յետոյ խոյս կուտան: Տեղական իշխանութիւնը չարագործներն հալածելով կը ձերբաժարանին դատաւորներէն մին և երեք ուրիշ հայ-թրքեր: Տեղական կառավարութիւնն այժմ կը փնտռէ նոցա զբարիչներն ու մեղակիցներն: Գերապայծառն ևս դարմանուելու վրայ է: Բ. Գուռն և դատական նախարարութիւնն հեռագրաւ հրամաններ զրկեցին տեղայն կուսակալին և ընդհանուր դատախազին, որպէս զի կանոնաւորապէս և կատարելապէս հարցաքննեն ոճրին հեղինակներն, նոցա գրողներն ու մեղակիցներն, երեւան հանն ոճրին բուն պատճառներն ու շարժառիթներն, և անօրինն օրինական պատիճները»:

Այս լուրը զարմացում և դժգոհութիւն միանգամայն կը պատճառէր և «Արևելք» նոյն օրն այդ զգացմանց թարգման կը հանդիսանար: Արդարև հայ վարժապետ մը և ուրիշ հայեր, որ հասնուորէն նորա հաւատարմերը պէտք է լինեն, ինչ շարժառիթ կրնան ունենալ սպանել փոքր ճիւղ համար հոմէական հայոց առաջնորդը: Չենք կարող ըսլ թէ կրօնական տանութիւններն է այդ շարժառիթը պատճառող: Այսքան տարի է և ճայքան տեղեր են, որ հայը կրօնական տանութիւնը դիրար կատեն, բայց դիրար սպանելու փորձ չեն ըրած: Հոմէական հայոց առաջնորդն, որ այսպիսի ոճրագործութեան մը ենթակայ կըլլայ, անուշա ծանր մեղք մը ունի յայտնի հակառակորդաց: Բայց Պոլսոյ հայք չեն ուղեր հաւատալ այս լրոյն և կուզեն սպանել աւելի մանրամասն և ստոյգ տեղեկութիւններ:

Առայժմ մի հաղորդեմք ինչ որ գիտենք:—Այս դէպքը տեղի ունեցած է Չառակի օրերն, ապրիլի 26-ին և հեռագրուէր է Պոլսի Ազարեան Պատրիարքին, բայց հեռագրերը Պատրիարքին չէ արուել, այլ ուղղակի խրկուէր է արժուոյն պատան և անտի խրկուած է նախարարութեան օրպէս զի պէտք եղած տնօրինութիւններն ըլլան: Վերաւորեալ եպիսկոպոսը տեսնելով որ իւր հեռագրոյն պատասխանը չը գար, ուրիշ հեռագրեր մը կընէ առ Ազարեան Պատրիարք և այդ հեռագրովն է, որ Պատրիարքը կրմանայ եղելութիւնը: Բայց արդէն ժամանակ անցած լինելով և դատական գործողութիւններն ալ կատարուած ըլլալով, մասնաւոր թղթատարի օրն ալ մօտեցած է, ուստի այլ ևս գաղտնի պահելու հարկ մը չը կայ:—Իսկ Ազարեան Պատրիարքը կը փութալ հաղորդել զայն թիւրք լրագրաց:

Այս դէպքը, եթէ ստոյգ լինի, կրնայ վնասել մեր Բրիտանացի, մասնաւոր կաթողիկէ Երօպայի մը առաջ, հարուած մը կուտայ մեր դատարն: Հայք մոլեռանդ են, անարժան են ու և է ազատութիւն վայելելու քրիստոնեայ Երօպայէն, պիտի ըսնու Տպաւորութիւնը լաւ չը պիտի լինի:—Բայց, ինչպէս ըսլ, մանրամասն տեղեկութիւններ հարկաւոր են գործոյն վրայ դատաստան կարեւոր ընելու համար:

Ազարեան Պատրիարք ամեն ժամանակե տւելի իւր ջանքերը կրկնապատկած է Հայաստանի մէջ հոմէականութիւնը տարածելու նպատակաւ: Առայս կը մղէ զինքը նաև այն թշնամութիւնը, որ կայ Ազարեան Պատրիարքի և Պապին Պոլսոյ նուիրակին միջև: Պապական նուիրակն հաշտ աշօք չը նայեր Ազարեան Պատրիարքին ձեռք բերած յաջողութեանցն և քաղաքական ազդեցութեան վրայ. պապական նուիրակն միայնած է Ազարեան Պատրիարքի ազդեցութեան առաջ: Նուիրակը շատ հետամուտ է, որպէս զի Ազարեան հեռաղիք Պոլսին: Հակահատուցանց միութեանն առթիւ պապական նուիրակը ի սկզբանէ անտի կը գրէր Հոմ թէ՛ Ազարեան հակառակ կը շարժի կրթիկի եկեղեցւոյ ուղղութեան, զօհողութիւններ ընելով Հակահատուցանց, իսկ Ազարեան կը պնդէր թէ ուրիշ միջոց չը կայ միութիւնն ընելու և աղբեղութիւն բանեցնելու արեւելից մէջ, որպէս զի նորանոր գունդեր հայոցմէ

հոմէականութիւնն ընդունին Ազարեան Պատրիարք Հոմայ առաջ իւր քաղաքականութիւնը կատարելապէս արգարացնելու համար վերջին աստիճանի ջանքեր ի գործ կը դնէ, որպէս զի մի քանի հազար հայեր Հայաստանի մէջ կաթողիկէութիւնը ընդունին: Կերեի վերաւորված եպիսկոպոսն ամենաջերմ աշխատողներէն մին է: Ո՞ պիտէ ինչ միջոցներու դիմած է և կատարեցուցած է հայերն, եթէ երբէք ստոյգ է պատուած դէպքը:

Իսկ Պոլսոյ մէջ Ազարեան Պատրիարքի մի թիւրք չը խնայեր ս և է: Չանք, որպէս զի այս առիթէն օգուտ քաղէ և բոլորովին կասկածելի ընէ Միացեալ-Ղնկերութիւններ:

Առայժմ ուղին ունենը ըսելու այս խնդրոյն վրայ և կը սպանեմք նոր և աւելի ստոյգ տեղեկութեանց:

Մեր պատրիարքարան հասած տեղեկութիւններն ալ շատ կարճ և անորոշ են:

Պրուան կարևոր դէպքն այս վերաւորման դէպքն ըլլալով հանդերձ չէ մոռցուած Թարսիսի Պատրիարքի խնդիրն: Ընդհանուր կարծիք և յոյս կայ թէ՛ քիչ օրէն կը հրատարակուի կայսերական հրամանագիրը Թարսիսի Պատրիարքին Երուսաղէմայ օպատրիարքութիւնը վաւերացնող Եւայս կերպով նոր Պատրիարքի ընտրութեան խնդիրն երևան կընեն:—Նոր Պատրիարքը ընտրութեան մասին ինչ որ նախապէս զրած եմ, նոյնն է իրաց վիճակն դեռ: Իր փրկուան Մատթէոս եպիսկոպոս կը մնայ միշտ առաջին ընտրելի: Իսկ այնուհետև կուզան Նար-Պէյ խորէն և Պրուսայի առաջնորդ Բարթողիմէոս եպիսկոպոս:

Հայաստանէն եկած լուրերը ցաւալի են. ողորմուէր և հեղինակ ամենուրեք մեծամեծ վնասներ հասցրած են. և ամեն կողմանէ օգնութիւն կը խնդրուի: Իսկ Պոլսոյ չիփօթեմ է Արդէն Պոլսոյ նուիրակն դառն վիճակի մէջ, ինչ ընել, թրուհ հասնել, թր մէկուն օգնութեան ձեռք կարկառել, անպատճառ ջանք պէտք է, և մինը չուարած կը մնանք:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ինչպէս հեռագրում Կ. Պոլսից, անգլիական դեսպան Ռայտ աշխատում է՝ դաշնակցութիւն հաստատել Թուրքիայի և Անգլիայի մէջ:

—Տիրիքիլի կայսրի ստողջութիւնը այնքան լաւացաւ, որ նա արդէն կարողացաւ այս օրերս բաց կառքով գալ Բերլին, և այցելել Ազուստա կայսրուհուն: Կայսրը ներկայ էր նոյնպէս և Հենրիխ իշխանի ամուսնութեան հանդիսին՝ պալատական եկեղեցում:

—«Սօֆիայից հեռագրում են, որ իշխանուհի կրկնանայնա շուտով կը վերադառնայ Սօֆիա:

—Հոմի պապի գրութեան դէմ յայտնված բողոքը առիթով իրանդիայի շատ կողմերում տեղի ունեցան միտինգներ, և համակրութիւն յայտնեցին այդ բողոքի վերաբերութեամբ: Մեծ պրօպագանդա է լինում, և այն միտքն է պաշտպանվում, որ քաղաքական գործերի մէջ Հոմի միջամտութիւնը միանգամայն անտեղի է, քանի որ նրան վերաբերում են միայն կրօնական հարցերը:

—Փարիզում շարունակում են գումարով ժողովներ, որոնք միջոցներ են որոնում բուլղանիստներին օչնացնելու համար: Այդպիսի ժողովները մէկում վճռվեց հիմնել «Մարդկային և քաղաքացոյն իրաւունքները ընկերութիւն», որը պէտք է ձգտի փոքր առ փոքր իրագործել սահմանադրական, քաղաքական և սոցիալական բեֆօրմները:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պարուստանի Մէշեք քաղաքից մեզ գրում են՝ «Երբեք յայտնվեց, որ այստեղ արդում են երկու հողի, մարդ և կին, որոնք հայ են, և մի քանի տարի առաջ թողնելով լուսաւորչականութիւնը, ընդունել են մասնաւորականութիւն: Կրօնափոխութեան պատճառը եղել է այն, որ դրանք սիրահարուել են, և երբ աղջկայ ծնունդը դիմարկել են այդ ամուսնութեան, նրանք փախել և եկել են Պարուստան: Թէ մարդը և թէ կինը, ինչպէս իրանք են պատմում, չուչեցի են: Մարդու անունը Աւաղ է եղել, իսկ կնոջ անունը Թագուհի: Երկու ամուսիններն էլ յայտնել են Մէշեք եղած մի քանի հայերին, որ ցանկանում են նորից ընդունել քրիստոնէութիւնը, միայն թէ՛ դրա համար նրանք կարծու են օրնութեան»:

* *

Արտնորոգում դատարանը մի 14 տարեկան տղային դատապարտեց մի շաբաթվայ բանտարկութեան, այն պատճառով, որ այդ տղան վի-

բաւորական խօսքեր էր ասել լսելով վիճելով կայսրի ժամանակ լուրը:

Անգլիական «Pall Mall Gazette» լրագրի խմբագիրը, Ստէյք, որպէս կարգում ենք մայրաքաղաքի լրագրիներում, այս ամսի վերջերին գալիս է Ռուսաստան, ուստաց երկրի և ժողովրդի հետ աւելի մտ ծանօթանալու նպատակով: Ստէյք մի խնդր պատարի որդի է, նա տնային կրթութիւն է ստացել: Ստէյք 14 տարեկան հասակում Նիւ-Կլետի աւետարական դրասենեակներից մեկում սկսեց ծառայել և շուտով աղատ ժամերին սկսեց յօդուածներ գրել տեղական թերթում սոցիալական հարցերի վերաբերմամբ: Այդ յօդուածները այնքան աչքի ընկնող էին, որ 1871 թ.ին, այսինքն երբ նա 22 տարեկան էր, հրատարակեց նա որպէս աշխատակից «Northern Echo» լրագրի խմբագրի կողմից: Թիւրքաց պատերազմի ժամանակ, Գլազգոսի խօսքերով, Ստէյք ամենից շատ աշխատեց Անգլիայում բոլորակրթի աղատութեան համար 1883 թ.ին Ստէյք Լոնդոնում արդէն «Pall Mall Gazette» լրագրի խմբագիր էր: Այդ լրագիրը բոլորովին անկաս արմատական լըրագիր է, նա սկզբունքներին է ծառայում և ոչ թէ անձանց: Լոնդոնում այդ չնդած մի բան է պահպանողական լրագրի համար սուրբ է ամեն բան, ինչ որ կանէ Ստայրի, իսկ աղատամիտ լրագրի համար սուրբ է Գլազգոսի կամ նրա կողմնակիցների ընթացքը: Ստէյք հինգամսայ խմբագրութիւնը մի լաւ ապացոյց է այն բանի, թէ ինչ նշանակութիւն և ազդեցութիւն կարող է ունենալ մի տաղանդաւոր պարլեմենտ, որը նուիրում է իր ընդունակութիւնները հայրենիքի շահերին կրկար ժամանակ Անգլիայում այն համոզմունքն էր տիրապետում, թէ անգլիական նաւատորմը մնացած բոլոր պետութիւնների նաւատորմից աւելի զօրեղ է: Ստէյք անձամբ Պորտսմութ գնաց և ուսումնասիրեց զործի գրութիւնը: Նրա յօդուածները անգլիական նաւատորմի մասին բոլորին սարսափեցրին: Այդ օրից 70 միլիոնից աւելի ծախսեց անգլիական կառավարութիւնը Ստէյքի ցոյց տուած նաւատորմի պակասութիւնները ուղղելու համար Նոյնպէս մեծ ազմուկ գցեցին Ստէյքի յօդուածները Լոնդոնի բնակիչների բարոյականութեան մասին: Այդ լրագիրը մեծ ազդեցութիւն ունի մայրաքաղաքում, մասնաւոր գաւառներում: Շատ հակառակորդներ ունի Ստէյք, բայց ամենը կարգում են զրա լըրագիրը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՀԻՄՆԱՍՅԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՑ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 մայիսի 15 թիւով լրագրութիւն կայ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Շ

ՊԱՐԿԱՍՏԱՆԻ ԹԷՂԱՆ ԲԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԳՈՐԾՆԻ համար հարկաւոր է մի վԱՐԺԱՊԵՏ, որը պէտք է աւանդէ հայաց լեզու, պատմութիւն, աշխարհագրութիւն և բնագիտութիւն: Պայմանները իմանալու համար գիմել «Մշակի» խմբագրատունը:

ԴԷՊՈ ԼԱՍՊԱՆԵՐԻ, ՊԱՍՏԱՆԵՐԻ ԵՒ ՄԵՐԵԼԻ
Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՅԻ
Միջի-փողոցի անկիւնում (երկրորդ տուն, դէպի աջ կողմ՝ Երևանեան հրապարակից), Նարմանովի տանը ԲԱՏՎԱՍԵ Է ԵՐԿՐՈՐԴ ՊԱՇԵՍ ԿԵՐՈՍԻՆՆԵՐԸ ՄԱՍ ՄԱՍ ԾԱԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ: Մեր ստացած կերտիքը տարբերում է իր յատկութեամբ թիֆլիսում մաս մաս ծախվող կերտիքից: Նա հոտ չունի և կատարելապէս անվտանգ է:
ԳՆԵՐԸ ՉԱՓԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԵՄՏ ԲԱԳՈՒՒ ՎԱՃԱՌԱՆՈՅԻ ԳՆԵՐԻՆ:
Ծառանքի կողմից խաբարայութեան առաջն առնելու համար իւրաքանչիւր ծառային, որ գալիս է կերտին առնելու, արվում է մի ՄԱՐԿԱ «E. A. Цатуровъ. Керосинъ» գրութեամբ:
Առաջին պահեաւոր վճար՝ 30 ՎԱՐՏԱՆԻ ՄՈՏ, Պայվովիւ բժշկարանի կողմից: Արքունի և հասարակական հիմնարկութիւնները կարող են կերտին ստանալ առանձին զբոյնով և վճարել ամէկ ամիս:
14—25 (Շ. Ե.)

Въ редакциі газеты «МШАКЪ» продаются слѣдующія брошюры: 1) «Экономич. Положеніе Турецкія Армянь», публич. лекція Д.—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amiranjanjanz. Preis 20 kop. Иногородные, желающіе получить брошюры, благоволят присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру. Адресъ. Тифлисъ, Редакція «Мшакъ», или Tiflis, Redaction «Mschak». (Ե)

բացանել Բուխարայում պետական բանկի բաժին: ՎԻՆՆԱ, 19 մայիսի: Կայսր Ֆրանց-Յովսէփ Մեծ Իշխան Պապէ Ալեքսանդրովիչին կայսր Ալեքսանդր II-ի անունան նուիրած ուղանները գնդի բոսովորի պաշտօնից բարձրացրեց մինչև նոյն գնդի գնդապետի պաշտօնը: Կառավարութիւնը ներկայացրեց աստիճանական ընթացքով պատգամաւորներ ժողովին մի օրինակի՝ սպիրտային խմիչքների վրա լրացուցիչ մաքսահարկ դնելու հարցի վերաբերմամբ: Այդ նախագիծը յայտնում է, որ ի նկատի ունենալով օդի վրա դրած մաքսահարկը, այս օրէնսդրութեան հրատարակութեան օրից սկսած մինչև 1888 թ.ի օգոստոսի վերջը ներմուծվող սպիրտային խմիչքներից կը վերցվի լրացուցիչ մաքսահարկ 36 դոլլէնի բանակութեամբ:

ՀՈՍՄ, 19 մայիսի: Առանձին յանձնաժողով է նշանակվում ավերի պաշտպանութեան հարցը ուսումնասիրելու համար: Համապատասխան միջոցները կառավարիկն պարամմիտին նոյնմեր ամսուս:
ՎԻՆՆԱ, 20 մայիսի: Այստեղի լրագիրները, խօսելով այն մասին թէ Մեծ Իշխան Պապէ Ալեքսանդրովիչ ստացել է գնդապետի կոչումը, այդ իրողութիւնը համարում են Ռուսաստանի և Աստոր-Ունգարիայի փոխարքա՝ բարեկամական յարաբերութեան միջնորդական նշան:

ՓԱՌԻՉ, 20 մայիսի: Երկէ երեկոյեան, ուստաց զեսպան բարձր Մորէնէյի, ճաշկերպի տունը ի պատիւ Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Կարնոի շաշից յետոյ փառաւոր ընդունելութիւն եղաւ, որին մասնակցեցին թէ զիպոմատիական մարմինը և թէ բարձրատիման անձինք: Կեսպանատան այգին շքեղ կերպով լուսաւորված էր:

ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ ԿՈՂՄԻՑ
Կ. ՊՈԼԻՍ. Հ. Ստացել ենք, բայց չենք կարող տպել:
ՇՈՒՇԻ Ն. Բ. Չեր պատասխանը չի տպվի:

Խմբագիր-հաստարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Գրիգոր քահանայ ԽՈՋԱԷՆԻԱԹԵԱՆ յայտնում է ի գիտութիւն իր բարեկամների, ծանօթների և հասարակութեան, որ ամեն 22-ին, կերակի օրը, կատարվում է իր հօր, հանգուցեալ ԹԱԳԷՈՍ ԱԻԱԳ ԲԱՇԱՆԱՅ ԽՈՋԱԷՆԻԱԹԵԱՆԻ մահիւն տարեկիցը և խնորում է շնորհ բերել վաճառ-եկեղեցին, առաւօտեան ժամը 11-ին:
1—1

Օրերոյ Ս. Վ. ԱՐԳՈՒԹԵԱՆԻ ԳԻՇԵՐՈՒԹԻ ԴՊՐՈՑԸ ամառը տեղափոխվելու է մտիկ ամառանոցներից մէկը: Ընդունվում են գիշերօթիկները: Հասցէն՝ Ֆրէյ-լինակայա փողոց, № 8:
4—4 (Շ)

ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ԳԵՐԱՊԱՏԻ ՀԱՅՐԵՐԻ ԷԼԻԿՍԻՐԸ
ՍՈՒԼԻԱԿ (GIRONDE) ԱՐԲԱՑՈՒԹԻՒՆՅՈՑ
Այդ էլիկսիրը հնարել է 1373 թ.ին վանահայր ՊԵՏՐՈՍ ԲՈՒՐՍՈ:
Այդ էլիկսիրի մի քանի կաթիլների ամենօրեայ գործածութիւնը պահպանում է ստամոքսը փշանալուց, տալիս է նրանց սպիտակութիւն, ամրացնում է լինդերը և թարմացնում է բերանը:
Բացի էլիկսիրից ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ հայրերը պատրաստում են զարձեալ ԱՍԱՄՆԱՓՇԻ և ՊԱՍՍԱ ստամոքս սրբելու համար, որոնք նմանապէս կարելի է ձեռք բերել անէն փոքր ի շատէ նշանաւոր դեղատնիկում, ինչպէս և դեղատան ապրանքների պահեստներում ու պարֆյումերական մագաղաններում:
ՎԻՆՆԱՐ ԱԳԷՆՏ SEGUIN, BORDEAUX, rue CROIX de SEGUEY, №106.
14 —30 (Շ.)

ԳՈՐԾԱՐԱՆ
ԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԿԱՆ, ՄՐԳԱՅԻՆ ԵՒ ԳԱՋԱՅԻՆ ԶՐԵՐԻ
Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ ԲԱԹՈՒՄՈՒՄ
(Յերիջեալ փողոցում, Կոնստանտինովի տան կից, որտեղ գեղեղվում է Լօբկօ և ընկ. տպարանը):

Պատիւ ունեմ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերանորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ժԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՇԱՆՁՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ:
Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՅԻՍՅԻ մի ՊՐՈՎԻՉՈՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենանոր ձեռք մեքենաներ, նոյնպէս և ՉԻՎԻՆԻ հուշակար ՖԻՏՏՐԸ, որը միակ է, որ աշխուժեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղբից և դերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ:
Պրովիչորը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում: Շնորհով այն օժանդակ միջոցներին, որ տալիս է գիտութիւնը անախտական քիմիայի ճիւղում, այսուհետեւ իմ գործարանում կը պատրաստվեն, բայց զէտէրեան, միջային և գաղային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԿԱՆ ԲՃՇԿԱԿԱՆ ԶՐԵՐԸ, ինչպէս օրինակ՝ վիշի, էմս, կարտապի, Մարիէնպաղի ջրերը, լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների տուած կանոններին: Արուեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հուշակար բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի դերազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ դրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ ածխածին գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախորժելի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա:
Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել դէպի գործս ամենամեծ ճշգրտեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ:
Տարածաշրջաններից խուսափելու համար, խոնարհաբար խնդրում եմ իմ ջրերի գործածողերին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի նշանակը, քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ 19—50 (Ե)
ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ
Россійское Общество Застрахованія капиталовъ и доходовъ
УТВЕРЖД. ВЪ 1835 ГОДУ
ԲԱՐՁՐԱԳՈՑԻ ՀԱՍՏԱԿԱՍԾ
Ռուսաց ընկերութիւն կապիտալների և եկամուտների ապահովութեան
հիմնված 1835 թ.ին

Ամենահին և միակ ուստաց ընկերութիւն, որը բացառապէս պարապում է կեանքի (կապիտալների և եկամուտների) ապահովութեան գործով, փոխարքաութեան սկզբունքները վրա:
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԻՑ 8,000,000 ՐՈՒԲԼԻ
1. Կապիտալների ապահովութիւնը ժԱՄԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԻ համար, ապահովացնողը մահուան դէպքում:
2. Կապիտալների ապահովութիւնը ԾԵՐՈՒԹԻՒՆԸ և երեխաների համար ԲԱԺԻՆԻԲԸ ապահովացնելու համար:
3. Եկամուտների և ցմաճ նշանակվող ԹՈՇԱԿՆԵՐԻ ապահովութիւնը:
Տարիները և մանրամասն տեղեկութիւնները ուղարկվում են անվարձ ԳԻՄԱՌՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ կողմից, որը գտնվում է Թիֆլիսում: Վերամիտնովսկայա փողոց, տուն № 24.
Գլխաւոր Ագէնտ և Տեսուչ Կովկասեան երկրի համար՝ Ն. Ն. ԳՐԻՆՁԵՆԻԿԻԳ:
ՊԱՇԱՆՁՎՈՒՄ ԵՆ ԱԳԷՆՏՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ
Թիֆլիսի և կովկասեան ուրիշ քաղաքների համար: 4—32 (Հ)

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли антикарскими товарами въ Тифлисъ (Графская ул., домъ бывш. Шабурова).
ԲԱՐՁՐԱԳՈՑԻ ՀԱՍՏԱԿԱՍԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՐԱՍԱՆ ԱՊՐԱՆԻՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒՒ ՄԷՉ:
ՀԱՆԲԱՑԻՆ ԶՐԵՐ, Կովկասեան և արտասահմանեան, այս պարնանը շինելի մէջ նոր անվարձ ՅԵՏԻՑ ԵՒ ՄԻՋԱՆԵՐԻՑ ՊԱՇԱՆՁՆԵՐԸ, Նաւթային, բամբուրայ, ցից ոչնչացնող հեղուկ, Պարակալեան և Կալմիկայի փոշի, և Բուրելի անթիւմ կոչված բոյոր:
ՕՐԿ ՄԱԲԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ պրոֆեսոր ԿԻՏԱՐԱՅԻ, կարապաքաձ փոշի երկաթի արձանապով, որպէս ամենալաւ միջոց անմաքրութեան տեղերը խտակելու համար, կարբոլեան թիթուտ, մաքրված և չը մաքրված տեսակից, խրոպային կիր, ծծուկ, երկաթի արձանապ և Մարգանցի կրկնաթիթուտ:
97—100 (Հ.)